ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ՍՈՉԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

սեպտեմբերի 15-ից 18-ը, 2025թ.

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Սլավիկ Սարգսյան, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Ռուսաստանի Դաշնություն (Սոչի), սեպտեմբերի 15-ից 18-ը, *2025թ.*

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ռուսաստանի Դաշնության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարություն

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Աշխատանքի տեսչությունների Եվրասիական տարածաշրջանային դաշինքի համաժողովին (ЕАРИТ)

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Համաժողովին քննարկվել են՝

- Աշխատանքի տեսչական մարմինների միջազգային ասոցիացիայի 2025 թվականի գործունեությունը.
- Դաշինքի անդամ երկրների կողմից իրականացվող վերահսկողության առանձնահատկությունները.
- Անօրինական աշխատանքի դեմ պայքարին ուղղված գործողությունները.
- «Դաշինքի լավագույն տեսուչ» տարբերանշանի մշակումը և 2025 թվականի լավագույն տեսուչների պարգևատրումը.

- Նախագահության ընտրություն, համաժողովի արդյունքների ամփոփում և այլ ընթացիկ հարցեր:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Համաժողովին ներկայացվել է Տեսչական մարմինների գործունեության ընթացքում արձանագրված առաընթացները, համագործակցության շրջանակներում լավագույն փորձի կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել իրականացվող վերահսկողության ժամանակ նորագույն տեխնոլոգիաների կիրառման հնարավորությանն ու արդյունավետությանը:

Ելույթով հանդես են եկել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարը, Աշխատանքի տեսչությունների Եվրասիական տարածաշրջանային դաշինքի համաժողովի անդամները:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Արդյունավետ են գնահատվել արձանագրված հարցադրումները համաժողովի ժամանակ անդամ պետությունների հետ քննարկելը՝ փոխգործակցության շրջանակներում, ինչպես նաև հնարավորությունը ձեռք բերելու ընդունված լավագույն փորձը և հետագայում կիրառելու այն:

Որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Այս հանդիպումն ակնհայտորեն նպաստելու է ինչպես Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ակտիվ ներգրավմանը ընթացիկ աշխատանքներում, այնպես էլ նպաստելու է Հայաստանի Հանրապետության հեղինակության ու դերի բարձրացմանը:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

2025 թվականի սեպտեմբերի 19

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN SLAVIK 3807890467

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ